ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 մարտի 2011 թվականի N 36 - Ա

ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ <ԶՈՐԱԿԱՆԻ ԳԲԱ> ՓԲԸ -Ի ՏՆՕՐԵՆԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆԸ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒՅԹ ԱՆՑԿԱՑՆՈՂ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի հունվարի 25-ի թիվ 224-Ն որոշմամբ հաստատված 3-րդ հավելվածի պահանջներով, ի կատարումն ՀՀ Տավուշի մարզպետի 2007թ. հունվարի 29-ի 'Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետարանի ենթակայության տակ գտնվող պետական ոչ առևտրային կազմակերպությունների և հարյուր տոկոս պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող փակ բաժնետիրական ընկերությունների գործադիր մարմինների տնօրենների ընտրության /նշանակման/ մրցույթի և ատեստավորման ընթացակարգը հաստատելու մասին' թիվ 7-Ն որոշման 1-ին հավելվածով հաստատված ընթացակարգի 6-րդ կետով՝

ո ր ո շ ո ւ մ ե մ.

1. Ստեղծել հանձնաժողով հետևյալ կազմով.

1.	Ս. ԴԱՎԹՅԱՆ	-	Հանձնաժողովի նախագահ, ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի ղեկավար
2.	Վ. ԽԱՌԱՏՅԱՆ	-	Հանձնաժողովի քարտուղար, ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի առողջ. և սոց. ապ. վարչության առաջատար մասնագետ
3.	Կ. ԴՈՎԼԱԹԲԵԿՅԱՆ	-	ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ
4.	Ռ. ՆԵՐՍԵՍՅԱՆ	-	ՀՀ Տավուշի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ
5.	Ռ. ՏԻԳՐԱՆՅԱՆ	-	ՀՀ ԱՆ Տավուշի մարզային ՊԱԳ-ի տնօրեն

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Ա. ՂՈՒԼԱՐՅԱՆ

28 մարտի 2011թ.
ք. Իջևան